

ՏԱՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն նորագրաստան մէջ:

Օտարապարտաքցիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менка»

Խմագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ սոն օրերից):

Ձայտարարութիւնը ընդունվում է ամեն կողմով:

Ձայտարարութիւնների համար գծարում են
խրատանյութ րոտին 2 կոպեկով:

ԲՈՂԱՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Երկրի մի պատճառ կայ:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ Ախալցխայից: Նամակ Նոր-
Քայազեթից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: Հայոց խնդիր: Նամակ Թիֆլիսից:
Արտաքին լուրեր:—ՀԵՆՈՒԿԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ծախսարար
Սինաս փէզօրի:

ԵՐԵՒԻ ՄԻ ՊԱՏՃԱՌ ԿԱՅ

Հայերի և հրէաների մէջ մի նմանու-
թիւն կայ, այն է որ ամենքը թէև շատ
ընդունակ և խելօք են համարուած թէ հրէ-
աներին և թէ հայերին, բայց ոչ ոք չէ
սիրում ոչ հայերին, ոչ էլ հրէաներին:

Ի՞նչ է այդ անբացատրելի հակաբու-
թեան պատճառը, որ ամեն ազգերը ունեն
զէպի հրէաները և զէպի հայերը: Երեւի
այդ հակաբուծեան համար մի հիմնական
պատճառ կայ....

Այդ պատճառը մեր մէջն է՝ հրէաների
և հայերի մէջ: Այդ երկու ազգութիւննե-
րը ունեն անթիւ խոշոր պահապանութիւններ,
որոնք նրանց հակակրիտ են դարձնում միւս
ազգութիւններին... Ազգային դատարար-
ութիւնը, պատմական հանգամանքները
ստիպում են այդ տեսակ ազգերին, ինչպէս
հայերն ու հրէաները, մշակել իրանց հա-
մար առանձին սկզբունքներ, որոնք համա-
պատասխան չեն ընդհանուր մարդկութեան
մէջ ընդունված բարոյականութեան ըսկը-
բունքներին: Այդ երկու թիւն մասնաւոր նը-
կատում է հրէաների մօտ:

Այստարհիս երեսին գրեթէ մի ազգու-
թիւն չը կայ, որ չատէր հրէաներին երեւի
պատճառը նոյն իսկ հրէաների մէջն է:

Վերջին ժամանակները, մասնաւոր հրէ-
աների ջարդից յետոյ, Ռուսաստանի հրէա-
ները, կարծես զգացին, հասկացան այդ
ճշմարտութիւնը: Նրանք հասկացան թէ
պէտք է նորից դատարարակեն իրանց, փո-

խեն իրանց մէջ տիրապետող բարոյական
փարզապետութեան հիմունքները:

Եւ ահա կազմվեցաւ հարաւային Ռուսաս-
տանի հրէաների մէջ մի տեսակ նոր ա-
ղանդ, որ զիտաւորութիւն ունի մաքրել
Հին-Վտակարանը ճարմուղի մղեալնոր ազ-
գեցութիւնից և որ անուանվում է բերլիա-
կան հոգևոր եղբայրութիւն:

Այդ եղբայրութիւնը անխնայ կերպով
քննադատում է նոյն իսկ հրէաների պահա-
պանութիւնները և առաջարկում է նրանց
բարոյապէս վերանորոգել: Մի պատճառ
պէտք է լինի, որ ամենքը մեզ առում են,
ատում են առաջագէմ եղբայրութեան ան-
դամները, իսկ մեզ առում են, որովհետև
մենք հարստահարում ենք, վաշխառութիւն
ենք անում, խարում ենք, կողպտում ենք
այն ազգերին, որոնց շրջանում բնակվում
ենք: Բերլիական հոգևոր եղբայրութեան
զլխաւոր սկզբունքները սրանք են, չը պէտք
է գինեփաճառութեամբ պարապել, չը
պէտք է փողերը տոկոսով տալ, չը պէտք է
հարստահարել, չը պէտք է խաբել, չը
պէտք է թուղթ խաղալ և այլն:

Եւ զարմանալի երևոյթ. վերջին տաս
տարւայ ընթացքում յայտնվեցաւ և հայե-
րի մէջ անձաքննական մարտիկ ուղղու-
թիւնը, որի ներկայացուցիչը «Մշակ» էր:
Նոյն երևոյթը նշմարվեցաւ երկու ազգու-
թիւնների մէջ: Նոր ուղղութիւնը ատում
էր. երեւի մի պատճառ կայ, որ մեզ ամեն-
քը առում են, քննադատենք մեզ ուրեմն,
անխնայ քննենք մեր խոշոր պահապա-
նութիւնները: Եւ երկու ազգութիւնների մէջն
էլ անմիջապէս լսվեցաւ հին կուսակցու-
թեան ձայնը, որ աննկարագրելի կերպով
վրդովվեցաւ թէ յայտնվեցաւ մի նոր ուղղու-
թիւն, որ անխնայ քննադատել համարձակ-
վեց ազգի հին պահապանութիւնները:

Ազգութեան և եկեղեցու դաւաճան, ան-
ուս մանուկներ, յիմարներ և այլ և այլն,—
ահա այն անձականները որոնք թափվեցան

հայերի հին կուսակցութեան բերանից անձ-
նաքննութիւնը առաջարկող նոր կուսակ-
ցութեան դէմ, նոյն բառերով այժմ հրէա-
կան հին կուսակցութիւնը վերաբերվում է
զէպի բարոյական և հասարակական վերա-
նորոգութիւնը առաջարկող հրէական նոր
կուսակցութիւնը:

Այս բազմաթիւ Ռուսաստանում ուղեւորէն
լիցուով հրատարակող հին հրէական օր-
գանները խօսք չեն գտնում որ խայտառա-
կին վերանորոգիչ հրէական նոր կուսակցու-
թիւնը: Օրգանները ինչպէս «Восходъ» և
«Разсветъ» կատարած են որ երկասարգ
հրէական կուսակցութիւնը անխնայ քննա-
դատում է հրէական ազգի հին պահապա-
նութիւնները և նրա յանցաւոր ձգտումները:

Նրանց կարծիքով անձաքննութեան գրօ-
շար բարձրացնել հրէական հասարակու-
թեան, հին եկեղեցու, ընտանեկան կազմա-
կերպութեան, բարք ու վարքերի, հին բա-
րոյական սկզբունքների դէմ,—նշանակում
է ոչ թէ վերանորոգել ազգութիւնը, աւելի
արժանաւոր դարձնել նրան ժամանակակից
մարդկային կեանքի մէջ ապրելու, այլ նը-
շանակում է քանդել ազգութիւնն ու եկե-
ղեցին:

Հին հրէական կուսակցութեան կարծի-
քով հրէայի պահապանութիւնները, նրա յան-
ցաւոր, տգեղ, հակակրեթի հակամեծերը ազ-
գային յատկութեան մի մասն են կազմում,
ուրեմն քանդել նրանց, նշանակում է քան-
դել ազգութիւնը:

Արդեօք այդ շարժման և մեր հայերի
այժմեան շարժման մէջ չը կայ մի նմանու-
թիւն:

Մեր հին կուսակցութիւնն էլ կարծում
է որ քննադատել մեր դարերը ազգային
պահապանութիւնները, նշանակում է վնասել
նոյն իսկ ազգային գոյութեանը, քանդել
նոյն իսկ ազգութիւնը:

Իսկ մեր կարծիքով դա նշանակում է վե-

րանորոգել ազգութիւնը և պատրաստել
նրան աւելի արժանաւոր կեանքի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Օգոստոսի 14

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է
մեր եկեղեցիների երեցիփոխան Յովհաննէս Վան-
ցեանի ապօրինի վարմունքը եկեղեցական կայ-
քերի և դրամների հետ և երբ տարի հաշիւ չը
գրելը ժապաւինեալ մատաններում, որոնք ներ-
կայիս կոնստանտնուպոլիս արխիմանդիտ ընտանիքի
են:

Ժողովրդի խնդրագրին համաձայն, Թիֆլիսի
կոնստանտնուպոլիս հրամանագրից տեղւոյս հողեր
կառավարութեանը, հրաւիրել ժողովուրդը և
ընտրել նրանց միջից հաշուառաններ, հրաժա-
րեալ Վանցեանի մանր մունր սեպարութիւնները
քննելու և կոնստանտնուպոլիս ղեկուցանելու հա-
մար: Ամիս 9-ին կիրակի օրը, առաօտեան
ժամերգութիւնից յետոյ, բարեկարգիչ քանապի
հրաւիրանք, խուսն բազմութիւն ժողովրդաց
հաւաքվեցան Ս. Փրկիչ եկեղեցու դահլիճը և
ընտրեցին հաշուառաններ՝ Ղազարոս քանապի
Պահլաւունու, Մկրտիչ քանապի Գաճաճեան-
ցին, պ. պ. Կարապետ Մուրաֆեանցին, Յա-
րութիւն Սիրունեանցին, Վահան Ֆէնէճեանին,
Վահան Գրիգորեանցին, Յարութիւն Ղազա-
րեանցին, Մկրտիչ Տէր Մարտիրոսեանցին, Գրի-
գոր ձէպեանցին և Թորոս Լազարեանցին: Հո-
գևոր կառավարութիւնը հաստատեց յիշեալ
հաշուառաններին և հրամանագրից որ հետեւել
օրը հաւաքվեն և սկսեն հաշիւները քննել: Մի
հրամանագրով էլ Վանցեանին հրաւիրել, որ գայ
և իրան թղթերը յանձնէ: Նշանակեալ ժամա-
նակին հաւաքվեցան բոլոր հաշուառանները,
բայց Վանցեանը չը ներկայացաւ, այլ յայտա-
բարութիւնով յայտնեց հողեր կառավարու-
թեանը, որ սկարութեան պատճառով չէ կարող
գալ և թղթերը յանձնել: մինչև անգամ սպառ-
նում էր որ եթէ հողեր կառավարութիւնը
յանդգնի հաշիւներին մօտ գնալ՝ նա կը դիմէ
օրէնքին: Պ. պ. հաշուառանները հաստատ գիտ-

մրած երեսին և աստիճանաւորը դուրս է գալիս
սենեակից...

—Անուշ լինի, Մինաս փէզօրի: չնորհաւորում
են ներկայ եղող ծառայողները, մի ընդհանուր
ծիծաղ բարձրացնելով:

Մինաս փէզօրիը առանց նրանց նայելու հան-
գատութեամբ հանում է թաշկինակը, սրբում է
երեսը և նորից շարունակում գրել:

—Какъ съ гуся вода! նկատում է մէկը:

—Շան երես ունի, դա խօ մարդ չի—պատաս-
խանում է միւրը բարձր ձայնով:

Մինաս փէզօրիը խլի պէս շարունակում է իր
պարագմունքը:

Գանք ուրիշ արդիւնքներին:

Գիւսնատան համար ծառաներ բռնում է միշտ
ժախտարարը: Նրանք բոլորովին վերջինի իրա-
ւունքի տակ են: Մինաս փէզօրիը ամեն անգամ
նոր ծառայ բռնելիս կանչում է նրան իր մօտ և
մանրամասնապէս յայտնում է նրան բոլոր պայ-
մանները:

—Շատայի համար նշանակված է ամսական
15 րուբլի—ատում է Մինաս փէզօրիը—իսկ դու
կը ստանաս 10 րուբլի: Թէ ուր է գնում մնացած
հինգ րուբլի—այդ քո գործը չէ: Տէրութիւնը մեծ
ծախսեր ունի և շատ պարտք: Եթէ համաձայն
ես ստանալ ամսական 10 րուբլ և զգալիքս
ստորագրել 15—էզուցուանից կարող ես սկսել
պաշտօնը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՇԱԽԱՐԱՐ ՄԻՆԱՍ ՓԵՉՕՐԻ

Հարկաւոր է ունենալ Գօզօրի տողանդը, որ
կարելի լինի դուրս բերել ամբողջապէս այս տի-
պը: Ես միայն ցոյց կը տամ ընթերցողին նրա
մի քանի գծերը: Այս տիպը ունի պատմական
նշանակութիւն, որովհետև նա արտադրութիւն է
այն բերօղորտական կեանքի, որ թագաւորում
էր դատաստանական բեֆօրներից առաջ:

Մինաս փէզօրիը ամենայն իրաւունքով կա-
րելի է անուանել բերօղորտական կեղծաւորու-
թեան, ստի, շղթաբութիւնեան և կեղտոտու-
թեան դարբիւղ:

Թողնելով միանգամայն նրա մասնաւոր կեան-
քը, ես կը ներկայացնեմ ընթերցողին միայն նը-
րա ծառայողական գործունէութիւնը:

Մինաս փէզօրիը ունի մի միջակ դրամագլուխ,
որ ձեռք է բերել իր «չինգիլիկական» յատկու-
թիւնների չնորհիւ: Տաս տարուց աւելի է, որ
նա վարում է մի դիւանատան մէջ՝ ծախսարարի
պաշտօն: Ի՞նչն է պակաս: Կամակ էլ է իր ձեռ-
քին, դանակն էլ—ոնց ուղում է կտրում է: Ի՞նչ
որ գնի դիւանատան համար՝ ցախ, մոմ, թուղթ,

գրիչ, մահուղ—բոլորից իր համար միշտ շատա-
նորդ է կը հանի: Որովմաճ է, օրինակ, որ գի-
չերները պարագող ամեն մի գրագրի առաջ պէտք
է մի մոմ լինի, բայց Մինաս փէզօրիը երեքին
տալիս է մէկ մոմ, իսկ երկուսը աչքարա
տանում է իր տունը: Նրանից խօ թուղթ ուղե-
լը ու նրա մսիցը պօկելը մի և նոյն ցաւն է:
Առանց աղմուկի ոչ սէկին մի թերթ անգամ չի
տայ:

Մեծ օգուտ է տալիս Մինաս փէզօրիը այն
հանգամանքը, որ դիւանատանը ամենայն տարի
ամբարնոց է գնում: Կահ-կարասիքը տանելու
համար ծախսարարի պարտականութիւնն է արա-
բաներ վարձել: Մինաս փէզօրիը վերցնում է, օ-
րինակ, 10 արաբա. բացի նրանից, որ վարձը եր-
կու անգամ աւելի է ցոյց տալիս, նա մի և նոյն
ժամանակը աշխատում է տեղաւորացնել բոլոր
ծանրութիւնը 8 արաբայի վրա—իսկ երկուսը
ծառայացնում է իրան: Ամբարնոցը տալիս էր
և ուրիշ արդիւնքներ: Հաստատ փաստ է, որ սը-
րանից 3—4 տարի առաջ դիւանատան գլխաւորի
ամբարային բնակարանում միշտ կորչում էին չու-
զունէ պլիտաները: Հէնց կը գային ամբարնոց,
—պլիտաները անհետացել են:

—Մինաս փէզօրի, պլիտաները ուր են: Չէ որ
քո հակողութեանն է յանձնված, ինչու չես լաւ
մտիկ տալիս—նեղանալով հարցնում է տիկինը:
—Ինչ անեմ, խանրալի, պատասխանում է Մի-

նաս փէզօրիը, էլ լիբը, աւազակ մալականների
հախիցը գալ չի լինում, հէնց աչքը շուռ ես
տալիս—Թոքնում են ամեն բան:

Բայց այդ լիբը, աւազակ մալականը հէնց ինքը
Մինաս փէզօրիըն էր: Մի քանի տարի նա յաջո-
ղութեամբ կատարեց մալականի դերը, բայց մի
անգամ բռնվեց:

Աստիճանաւորներից մէկը յանձնել էր նրան
մի քանի նորոգութիւններ անել իր բնակարա-
նում: Մինաս փէզօրիը յաջողութեամբ կատարում
է յանձնարարութիւնը և ինչպէս վարձատրու-
թիւն փեշի տակին դուրս է բերում վառարանի
երկաթեայ դռները: Աստիճանաւորը այդ իմա-
նում է և միւս օրը մտնում է դիւանատան այն
սենեակը, ուր սովորապէս պարագում է Մինաս
փէզօրիը մի քանի ուրիշ ծառայողների հետ:

—Մինաս փէզօրի, իմ բնակարանի վառարանի
դռները կորել են: Ո՛ւր են անհետացել, չը գի-
տես—հարցնում է նա:

—Ես ինչ իմանամ, աղա. երևի մշակներն են
զողացել:

—Գողը հէնց դու ես, լիբը, աւազակ, անա-
ժօթ! Լուսութիւն և քրտնքի կաթիլներ....

—Ես քեզ դատաստանի տակ կը գցեմ, քո կա-
շի քերթել կը տամ, скатина! мерзавец!...
Մինաս փէզօրիը զողարով ուղում է ծունկ չո-
քի նրա առաջ, բայց այդ բազմին մի գունդ
թուր դիպչում է նրա խաչած կողակի պէս կար-

նալով, որ վանքեան հիւանդ չէ, յայտնեցին հոգևոր կառավարութեանը խիստ միջոցներ դիմել և նրան բերել տալ. բայց հոգևոր կառավարութիւնը փոխանակ նրանց լսելու հետեակ կարգադրութիւնն արաւ. այսինքն պահանջել վանքեան նից որ տիրութեան համար վկայական ներկայացնէ, և երկու օր ժամանակ տուեց: Երկու օրից ետքը հոգևոր կառավարութիւնը ստացաւ իրան ցանկացած վկայականը և ներկայացրեց հաշուատեաներին: Վերջիններս առանց ուշադրութիւն դարձնելու վանքեանի վկայականին և սպառնալիքներին, խնդրեցին հոգևոր կառավարութիւնից որ բաց անէ իրան կնիքը և թղթերը յանձնէ, բայց կառավարութիւնը չը համաձայնեց և հեռագրեց կոնսիստորին: Վերսպարիս Մամբրէն պատասխանեց որ, եթէ վանքեանը հիւանդ է, հարկաւոր է ստիպել նրան որ մի հաւատարմատար նշանակէ իրան կողմից: Միթէ կարելի է հիւանդին ստիպել, մասնաւոր վանքեանին, որ ուղեղի հիւանդութիւն էլ ունի, ինչպէս վկայականից երևում է... վանքեանին յայտնեցին կոնսիստորի հրամանը, բայց նա ոչ պատասխանեց, ոչ էլ իր կողմից մարդ նշանակեց: Այն ինչ կոնսիստորիան պատուիրում է անպարզ վերջացնել հաշուների քննութիւնը, միւս կողմից պաշտպանողական դիրք է ընդունում և նպատակ է դրծի ձգձգվելուն: Ինչ հարկ կայ երկար բարակ գրադրութիւններ ստել: Հոգևոր իշխանութիւնն էլ, ախալցիացիք ամենքս էլ գիտենք, որ վանքեանը ամենաաղքատ մարդն է մեր քաղաքում: Եթէ նա եկեղեցական գումարները վատնել է, նրանից ինչ կարող ենք ստանալ: Նշանակութիւն չունի նրա առողջ կամ հիւանդ լինելը: Ինչքան որ գործը երկարէ, այնքան մեր եկեղեցիները մեծ վնասներ կունենան, ուրիմն հարկաւոր է օր առաջ բաց անել կնիքները, հաշիւներին վերջ տալ, և եկեղեցական կայքերի, դարպիւղի և այլոց ցուցակները յանձնել նորոշուող երեցփոխանին, որ նա հակէ նրանց պահպանութեան վրա: Իսկ վանքեանի հետ հոգևոր իշխանութեան գործն է վարվել ըստ օրինի: Հրաւիրում ենք գերատառի Մամբրէի ուշադրութիւնը այս բանի վրա:

Օտարական

ՆԱՄՈՎ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵԹԻՅ

Օգոստոսի 11

Անցեալ յուլիսի 24-ին նորին գերագանցութիւն Երևանեան նահանգապետ Շախիով առաջին անգամ այցելեց մեր խղճալի Նոր-Բայաջէթը, որի հակացող դասը սպասում էր նորանոր բարենորոգումները քաղաքիս վերաբերմամբ: Տեղիս պատուար անձինք խոմբեր կազմած, փոխանակ քաղաքի բարեկամութեան համար խնդիրներ, զանազան անբաւականութիւններ, զանգատներ, զբարենութիւններ մէկը միւսի դէմ արտայայտեցին ասելով շայն ինչ դատաւորը, կամ այն ինչ անձնատուութիւնը լաւ կամ

Մասնաւոր անձնարացած ընդունում է այդ պայմանը և մտնում ծախսարարի իշխանութեան տակ: Մինաս ֆէզօլիզի պարտականութիւններից մէկն էլ այն է, որ նա վճարում է ճանապարհածախս այն աղքատ վկայներին, որոնց դիւանատուները կանչում էր հեռու գիւղերից: Ամբողջ ժամերով խեղճ գիւղացիք ստիպված են լինում շինքները ծռած սպասել, թէ երբ պէտք է Մինաս ֆէզօլիզը բարենաճի տալ նրանց այն, ինչ որ պէտք է ստանան օրէնքով:

— Աղա ջան, գլխիդ դուրբան, մեզ ճանապարհ դիր. բանից գործից աւարայ եղած գուր տեղը փող ենք խարջում էստեղ—աղաչում է նրանից մէկը:

— Ի սէր Բրիտանոսի, աղա ջան, մեզ մի պահ—խնդրում է միւսը:

— Բազ ըլէք գլխիցս! Բարկանում է Մինաս ֆէզօլիզը: Փող ստացողը կը սպասի, շինքն էլ կերկարի:

Գիւղացիք նորից գնում են և պատի տակին վերթափում: Մինաս ֆէզօլիզը նրանց պահում է այն նպատակով, որ ծառայողները հեռանան գիւանատնից: Հէնց որ բոլորեքեան ցրվում են և սենեկում մնում է միայն ինքը իր մանուկ գրագրի հետ, Մինաս ֆէզօլիզը կանչում է գիւղացիներին:

— Գիտե՛ք ինչ կայ—խոսում է նա բողաղը մաքրելով—օրէնքով ձեզից ամեն մէկին հա-

վատ բնատուրութիւն ունի: Եւ վերջապէս այսպիսի պարզ և անտեղի խօսակցութիւններով պատահեցին նորին գերադասութեան: Նորին գերադասութիւնը այցելեց քաղաքիս ուսաց տունը, զանձարանը, պոլիցիան և ուղեորվեց գաւառիս գիւղերը այցելելու, չը կամենալով որ իրեն առաջնորդին ծառայողներին, միայն երկու ձիւտներ վերառաւ և երեք օրից յետոյ վերադարձաւ և ուղեորվեց զէպի Մաղկաձոր, խօստանալով որ սեպտեմբերին կրկին այցելէ մեր քաղաքը և յայտնեց, որ այստեղ նոր գաւառապետ է նշանակվելու: Նորին գերադասութիւնը և նա եկեղեցու և իր կացարանի մէջ և այստեղից հեռանալու ժամանակ շատ բարեխղճաբար խրատներ էր կարդում հասարակութեանը ասելով. «մի քանի անհատներով այս քաղաքը չէ կարող բարօրութեան հասնել, դուք հարուստները պէտք է ինչպէս մարդ խնամք ձեր գրացիներին, ամեն հարկաւոր օգնութիւնները մատուցանէք հասարակութեան օգտի համար. մի քանիսներով չէ կարելի կազմել հասարակութիւն, չը պէտք է հարուստների կողմից անբաւական ստորակարգ դասը ժողովրդեան»: Այն, այս խօսքերը հակառակ էին հասկացող և հարստանարված դասերի համար: Մի և նոյն է մեր Նոր-Բայաջէթը և հիմա: Խաղաղական դատակնիք են կազմում տէրութեան նշանակված աստիճանաւորները կամ մի քանի աղքատ անհատներ քաղաքիցս աքտորելու նպատակով. և այս նրա համար, որովհետեւ դատաւորը օրէնքները չէ կամենում ծառայեցնել այս ինչ կամ այն ինչ մի յիմար անձնատուութեան տղայական կամքին կամ աղքատը իր տուն ու տեղը չէ կամենում առանց վարձատուութեան ընծայել աղայի բարեկամին:

Վաճառական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Եւտայի մօտ գտնված Օրիանդա պալատը, որ պատկանում է Մեծ Իշխան կոնստանտին Նիկոլայեվիչին, այս օրերս այրվեցաւ: Կրակը սկսվեցաւ վերնայարկից:

Մեր աշխատակից պ. Բաֆֆի խնդրում է մեզ յայտնել այն պարունակներ, որոնք յանձն են առել նրա գրքերը վաճառել թէ Թիֆլիսում և թէ գաւառներում, բարեհաճեն գոյացած փողերը ուղարկել «Մշակի» խմբագրատանը հեղինակի իսկական հասցեով:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են որ օգոստոսի 10-ին գիւղերվայ ժամը 2-ին այդտեղ զգալի եղաւ երկրաշարժի բաւական սաստիկ հարուած, բայց ան-

նում է տաս մանէթ. բայց որովհետեւ տէրութեան նեղ ժամանակն է հիմա, շատ հոգսեր և մեծ ծախսեր ունի, կառավարութիւնը հրամայել է, որ ասեն մէկից, ով դիւանատնից փող է ստանում, ծախսարարը մի բան յետ քաշի խաղընի օգտին: Այս պատճառով ես ամեն մէկիցը կորում եմ երկու մանէթ: Ինչ էք ասում:

— Դառայ ենք, աղա ջան, ինչ անենք: Թագաւորի հրամանի դէմ մեր ինչ բերանա խօսենք:

— Հա! Այ լաւ խօսք! Այդպէս միշտ ձեր մեծի հրամանները լսող ու կատարող պէտք է լինէք—գովում է Մինաս ֆէզօլիզը, փողերը զամբիւղից հանկուղի: Գէ մօտ եկէք և ստացէք ձեր հասնելիքը:

— Գիւղացիք թթու ժպիտը երեսներին ստանում են ութ ութ բուրբ:

— Գէ հիմա դավթարում ձեռք քաշէք՝ չստացայ 10 բուրբ, Քլան Քլանքատով:—թեղաղրում է Մինաս ֆէզօլիզը:

— Աղա ջան, գլխիդ դուրբան, ինչ ձեռք քաշեմ, թէ 10 մանէթ ստացայ, քանի որ երկուսը կարեցիր—համարձակվում է խոհանութեամբ նկատել մէկը:

— Է՛չ հաստաղուխ! բարկանում է Մինաս ֆէզօլիզը, կարեցի խօ իմ ջէրս չեմ դնելու: Ինչ ասում են կատարի, քանի որ զուրկ բանից դուրս չի գալի:

Գիւղացին զուրկ պտտելով ձեռք է քաշում:

Քնաս անցաւ: Երանակը այս ամառը, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը, բաւական հով և անձրեային է անցնում Վարաբաղում: Մեզ գրում են նոյնպէս որ այժմ Շուշում տարածված է մի հիւանդութիւն, որ շատ երեխաներ է փչացնում, երեխայի մարմինը սկսում է դուրս տալ, յետոյ բողաղը ուռչում է և խեղդում է երեխային: Այս հիւանդութիւնը, որ գուցէ դիֆթերիան է, Շուշում անուանում են գիւլտարան:

Մեզ գրում են Շուշուց հետեակ անհաւատալի երևոյթի մասին: «Այստեղի մի այգու մէջ մի տանձնի, որի կէտի տերները չորացած, համարեա թափված էին, իսկ միւս կէտի վրա մի քանի տանձներ ունի, այս օրերս նորից սկսեց ծաղկել և ծաղիկները երեսցին նոյն իսկ այն ձիւղերի վրա, որոնք գուրկ էին տերներին»:

Ս. Պետերբուրգի նահանգի ուսու աղանդաւորները դիտաւորութիւն ունեն խնդրել կառավարութեանը որ իրանց դաւակների համար, որոնք սովորում են պետական դպրոցներում, ուղղափառ կրօնի դաստուրութիւնը պարտադիր չը լինի, ինչպէս էս և բոլոր այլադոմներին համար:

«Petersburger Zig.» լրագիրը հաղորդում է որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի կրկին և մտնել համազգեստների (մունդիլը) համալսարանների ուսանողներին համար, ինչպէս եղել է Նիկոլայոս կայսրի ժամանակ: Համազգեստը կունենայ արծաթեայ կոճակներ, մոյզ կապոյտ օձիք և ուսանողները կը կրեն համազգեստի հետ և մի թուր:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնել է հետեակ տակսա մինչև սեպտեմբերի 1-ը: Թէ խած հաջը ցորենի ալիւրից առաջին տեսակի Ֆունտը արժէ 5 1/2 կոպէկ, երկրորդ 4 կոպ., տեղական ձեռով թխած հաջը նոյն ալիւրից, Ֆունտը արժէ առաջին տեսակը 6 կ., երկրորդ 4 1/2 կ., ցորենի և կրոնպաշտկայի ալիւրից խառն հաջը՝ լաւահներ առաջին տեսակի Ֆունտը 7 կ., երկրորդ 5 1/2 կ., երրորդ 5 կ.: Տաւարի մի Ֆունտը առաջին տեսակի 9 կ., երկրորդ 7 կ., սուկի 15 կ., ոչխարի մի Ֆունտը 9 կոպէկ:

«Страна» լրագիրն գրում են հետեակը: «Մեզ հաղորդում են որ կովկասեան վարչութիւնը երկու կրկնով որ կովկասեան խաղողի վազերը կը վարակին Ֆիլոխէրայի հիւանդութեամբ, ինչպէս էր պետական գանձից 12,000 բուրբ օժանդակութիւն այդ հիւանդութեան կրկին կովկաս անցնելուն առաջն առնելու համար: Այժմ, ինչպէս երևում է, Ֆիլոխէրայ արդէն տարածվել է Անդրկովկասում և նրան ոչնչացնելու համար տեղական վարչութիւնը խնդրում է պետական գանձից 50,000 բուրբ»:

Երբ բոլորեքեան ստացան փողերը և պատրաստվում էին գնալ, Մինաս ֆէզօլիզը բռնեց նրանց առաջը:

— Ձեր որդեկրանց սաղաղին, էս խեղճ եթիմին մի բան բաշխեցէք, ոչ նայր ունի, ոչ մայր. վարձքի համար պահում ենք էստեղ առանց ուժիկի—խնդրում է նա ցոյց տալով իր մանուկ գրագրի վրա, որ աչքերը գետին գցած աշխատում է արտայայտել երեւի վրա խորին թշուառութիւն: Գիւղացիք մի մի բան բաշխում են «եթիմին» և դուրս գալիս: Այսպիսով Մինաս ֆէզօլիզը վեց վկայներից ստացաւ օգուտ 12 բուրբ, որոնցից երեք բուրբին մտաւ ծառայի ջէրը և դրանով լուրթեան կնիքը դրօշմեց նրա բերանի վրա:

Իսկ որը գրագիրը Մինաս ֆէզօլիզի հարազատ որդին էր...

Արդիւնքի աղբիւրներից ամենաչափաւոր և մշտականը ուժիկ բաժանելու պրօցեսն է: Ամեն ամսի 20-ին այն սենեակում, ուր պարտաւորում է ծախսարարը, կատարվում են ամենախայտառակ տեսարաններ, ծիծաղաշարժ վոզը վրէժներ: Ամսի 20-ին տեսնել Մինաս ֆէզօլիզին և շատել նրան բոլոր սրտով—անկարելի է: Նրա դէմքի ամեն մի գիծը չնչում է այդ օրը ծայրայեղ սնամօթութեամբ, աներևակայելի լրբութեամբ: Ամեն մի ծառայողից, սկսած ամենաբարձրից մինչև ամենացածր Մինաս ֆէզօլիզը, անկարելի է, պէտք է մի բան պոկի՝ 20 կոպէ-

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ ներքին գործերի մինիստրութիւնը մի չըջարբաւական հրատարակեց, որով հարաւային Ռուսաստանի նաւահանդիսաներում արգելվում է բնակվել որոշ պարագմուներ չունեցող ուսանալատակ և առուտուրով պարագող, բայց օտարահպատակ հրէաներին:

«Новое Время» հաղորդում է որ երկու անձինք, որոնք բարձր պաշտօն ունեն Ս. Պետերբուրգի բժշկական վարչութեան մէջ, այս օրերս կառավարութեան հրամանով ենթարկվեցան դատաստանի, որովհետեւ ծախում էին մեծ գումարով պաշտօններ երիտասարդ բժշկներին: Օրինակի համար Ս. Պետերբուրգում բժշկի տեղ ստանալու համար նորաւարտ երիտասարդ բժշկները պէտք է վճարէին այդ պարունակներին 1000 բուրբ, իսկ կրօնշատուում 200-ից մինչև 500 բուրբ:

«Страна» լրագրում գտնում ենք հետեակ թւանշաններ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի քաղաքային դումաների կազմակերպութեան վրա: Ս. Պետերբուրգի դումայի ձայնաւորների թւում կան 11 զինուորականներ, իսկ Մոսկվայում միայն 2 հոգի, Ս. Պետերբուրգում ոչ մի հոգևորական չը կայ դումայում, իսկ Մոսկվայում 4, Ս. Պետերբուրգի դումայի ձայնաւորների մեծամասնութիւնը, 64 հոգի, պատկանում են պաշտօնեաների դասակարգին, իսկ Մոսկվայում միայն 26 պաշտօնեաներ գտնվում են ձայնաւորների թւում: Պատասար քաղաքացիներ Ս. Պետերբուրգի դումայում 41 են, Մոսկվայում 50, վաճառականներ առաջին քաղաքում 94 հոգի են, երկրորդում 16 հոգի, Վերջապէս Ս. Պետերբուրգում արուեստաւորներ թւում 2 են միայն, իսկ Մոսկվայում 26, իսկ գիւղացի ձայնաւորներ ոչ մի մարդ չը կայ Ս. Պետերբուրգի դումայում, այն ինչ Մոսկվայի դումայի մէջ 4 մարդ կայ գիւղացիներից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԻՆՊԻՐ

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ Փոքր-Ասիայի Հայերը զիմեցին արտաքին գործերի մինիստրութեանը, խնդրելով որ մինիստրութիւնը իր աջակցութիւնը ցոյց տայ թիւրքաց վարչութեանը Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու գործում:

Բերլինից հեռագրում են սնվլիական «Standart» լրագրին, որ մինչև որ շէյխ Իբրաղիմա՛հը, Քրիզը ապստամբների ա-

կով, 10-ով, 5-ով, մինչև անգամ մէկ կօպէկով! Եթէին ստում է՝ մանր չը կայ, յետոյ կը տամ, միւսին լրբարար աշխատում է հաւատացնել, թէ ուժիկը լիովին տուեց, ինչպէս է պատանի, որ 2 կօպէկը պակսել է—չէ հակասում: Աւելի բարձր աստիճանաւորների առաջ գալարվելով ներողութիւն է խնդրում, որ «մանր 32 կօպ.» չը կայ, երեկոյեան ծառայի հետ հուզարկի—և ի հարկէ երեք չէ ուղարկում: Ուշուց, թուք, անձեք,—էլ բան չէ մնում, որ այդ օրը չը թափվի Մինաս ֆէզօլիզը գլխին: Բայց նա համբերութեամբ ստանում է բոլորը: Եւ—մի և նոյնը ճշտութեամբ կատարվում է ամեն ամս:

Ես կարող էի դեռ շատ օրինակներ բերել, բայց նկարագրածս կարծեմ բաւական է, որ ընթերցողները կարողանան ծախսարար Մինաս ֆէզօլիզի վրա մի հակացողութիւն կազմել: Գուցէ մէկը նրանցից բողաղ բերմուղեով ստիպված կը լինի ծառայել Մինաս ֆէզօլիզի հետ: Այն ժամանակը նա կը համոզվի, որ նկարագրածս իսկականի հետ ուղիղ է:

Նկատող

աջնորդը, մեծ պատու է ընդունելու մի Պոլսում, այդ ժամանակ պարսից քերթերը հետեւելով սուլթանի հրաւերին, գումարվում են թիւրքաց սահմանների մտ, որպէս զի վերջը անցնելով թիւրքաց սահմանները, բնակեցրած լինեն Հայաստանի մէջ և իրանց թուրք ոյժ տան մահմեդական տարրին Հայաստանի կէս—Հայկական նահանգներում: Լորդ Կրօլը բողոքեց թիւրքաց Հայաստանում բեֆորմներ մտնեցնելու այդ օտարտի միջոցի դէմ:

«Մասիս» լրագրում կարգում ենք հետեւեալը:

Սերասիոյ Հայ և թիւրք հասարակութեանց կողմէ պատրիարքարան եկած հանրագիր մը դառնապէս կը գանդատի նահանգին կուսակալէն և կը խնդրէ որ իրենց գանդատը Բ. Կրան մատուցվի: Այս պատրիարքն յիշեալ հանրագիրը թագրիրով մը ներքին գործերի նախարարին ուշադրութեանը յանձնեց:

«Մասիս» լրագրում կարգում ենք և հետեւեալը:

Լճուղունց օգոստոսի 8 թուով եկած հեռագիր մը կը հաստատէ երէկվան Հավաստեալ տեղեկութիւններն ի մասին այն յայտարարութեանց զորս Զարլ Կիլ ըրած էր երեսփոխանաց ժողովին նախընթաց աւուր նստին մէջ, վերաբերութեամբ Հայկական խնդրոյն: Զարլ Կիլ յայտարարեց և թէ Բ. Կուռը մինչև ցարդ կարևոր բարենորոգում մը գործ չը զբաւ, բայց Լորդ Կրօլը այս նկատմամբ լուրջ դիտողութիւններ ըրած է վեհ. սուլթանին և նրա առաջին նախարար Սայիտ փաշային յանձնարարելով որ գոնէ բարեկարգական առժամանակեայ միջոցներ ձեռք առնուին, մինչև որ աւելի մնայուն և վերջնական բարենորոգումներ ի գործ դրուին: Այս առժամանակեայ միջոցը թւին լինել յուր կառավարաց պաշտօնակալութիւն, լաւագոյն պաշտօնատարաց անուանում, հասարակային ապահովութեան վրա մեծագոյն հսկողութիւն և այլն: Զարլ Կիլ ապահովութիւն տուած է խորհրդարանին թէ Լորդ Կրօլը այս ամեն առիթէ օգուտ պիտի քաղէ Հայկական խնդրոյն լուծումը փութացնելու համար:

Վիեննայում հրատարակող «Journal d'Orient» ֆրանսիական լրագիրը հրատարակեց իր 30 և 31 համարների մէջ մի պրօգրամ հայոց խնդրի վրա, որի մէջ այն միտքն է յայտնում որ թիւրքաց Հայերը պէտք է վերանորոգվեն ոչ թէ զենքի օգնութեամբ, այլ խաղաղ քաղաքակրթական մաքրումով, ինքնակրթութեամբ և անձնաբնութեամբ: Լրագիրը մեծ համակրութեամբ է վերաբերվում դէպի Ռուսաստանը:

«Journal d'Orient» լրագիրը հարգողութեամբ է որ յուլիսի 23-ին Լճուղունց կատարվեցաւ նորերս փանձանկած վէստմիստրի արքայի՝ Ստանկէի յուղարկւածութեան հանդէտը: Հանգուցեալը նախագահ էր Հայերի համար կազմած յանձնաժողովների և նոյնպէս Լճուղունց «Հայոց կրթական ընկերակցութեան» (Armenian Educational Association) որ բաղկացած է մեծ մասամբ անգլիացիներից և նպատակ ունի կրթութիւն տարածել Հայաստանում: Մանչեստրի հայերը ուղարկեցին նրա թաղման հանդիսին մի մեծ մախուրեայ խաչ, ծաղիկներով զարդարված և հետեւեալ արձանագրութեամբ՝ «Նրան երախտագրութեան հայոց ազգի կողմից»: Թաղման հանդիսին ներկայ էր Եսայի վարդապետ Ա-

տուածատուրեան, Մանչեստրի հայերի հոգեւոր պետը:

ՆԱՄՄԱԿ ԹԻՒՐԿՆԵՐԻՆ

Կ. Պոլս, 7 օգոստոսի

Այս բողոք տանալով Մշակի համարները, որտեղ թեմա Journal d'Orient-ի մասին արած յայտարարութիւնը, այս մասին ես հէնց երէկ գրեցի ձեզ, յայտնելով Ներսէս պատրիարքի մեծ ցանկութիւնը որ և է կերպով զօրաւորապէս օգնել յիշեալ լրագրին: Շատ ուրախալի է այժմ, որ այս մասին դուք ածապարտեցիք խօսել, յայտնելով մի և նոյն ժամանակ պ. Գաս. Նազուրեանի հետ շատ իրաւացի և դործնական դատողութիւններ պ. Կիւլօրթի Նիմեշի թերթի վերաբերմամբ: Հիմարտ ասեմ, հէնց առաջի օրից, երբ կարգացի Մշակի մէջ պ. Կիւլօրթի դիտաւորութեան և գործի յաջողութեան մասին, խիստ ուզեցի յայտնել մտաւորապէս նոյն դիտողութիւնները նրա մասին, որ յայտնում էք Նիմայ դուք և իմ բարեկամ Նազուրեանը: Բայց չուզեցի մտաւոր ժողովրդի մէջ արթնացած աղտոտեանի մի ազդարարական գործի համար, ես լռեցի, մանաւանդ որ գիտեմ առանց այն էլ կան եւանդոտ մարդիկ, որոնց հաճելի է կարգաւորել Կ. Պոլսի նամակների մէջ աւելի ոսկի գոծած «Հայրենասիրական» տեսարաններ և նկարագրութիւններ քան թէ խիստ և կծու դիտողութիւններ Կ. Պոլսի ինտելիգենցիայի մասին: Իմանալով, ասում եմ, շատ եւանդոտների աշակերտամտողութիւնը, ես ոչինչ չասեցի պ. Կիւլօրթի մտադրած ձեռնարկութեան մասին, թէ պէտք էր յայտնել, այլ ես նոյն իսկ իրան ֆրանսիային: Ես այս շատ բնական է, որովհետեւ խիստ մասնագէտ մարդիկ և այն էլ այնչափ զուտմեալ այլ լապէս դժուար կարող են լինել...

Այսպէս թէ այնպէս, բայց ինչ ուզում էինք և ինչին համարում, վերջապէս գտանք և գտանք կարծեմ աւելի յաջող պայմաններով, քան թէ կարող էինք յուսալ: Այնքան ունենք այժմ մեր օրգանը աւստրիական մաշրաքաղաքում, Հիմայ հարցը կը գոյ ամենակալանին, որի մասին հարկաւոր է լրջօրէն խօսել, ձանաչելով մեր ազգի շատ բուն ընտիր յատկութիւնների հետ միասին և նրա շատ տխուր և գէշ կողմերն էլ, որոնց մէջ առաջին տեղն է բռնում հայի ն ի սի ա ազգասիրութիւնը: Հայը շատ ուրախ կը լինի, որ լիզուներ արդարեւ համար, կարող է վիսյի թէ որչափ ճիշդ է վերս ասածս: Ռուսին եթէ այս այսպէս է, միթէ իւրաքանչիւր հայը կը խնայէ տարեկան 8 բուրլ վիեննայի Journal d'Orient-ին, որը եթէ չէ կարող կարգաւ ինքը, կարող է կարգաւ իր փոքրիկ որդին և թարգմանել իր հօրը նրանք ուրախացնելու և իրան օգուտ բերելու համար: Կարծեմ որ գործին նախընտրելով ինչ հնչը չոր շահի ու նիւթականի կողմից, յիշեալ ֆրանսերէն լրագրի ստանալը քիչ չաճաւէտ չէ և այս կողմից էլ, որից դուրս հայը ըստ մեծի մասին չէ ուզում ուրիշ շարժախիթ ձանաչել...

Այս տեսակետից նայելով մեր նոր ֆրանսերէն օրգանին բաժանորդ գրվելու վրա, հարկաւոր եմ համարում յիշեցնել յայտնել ես այն, որ մենք մինչև հիմայ զեռ չուներք մի փոքր ի շատ օրինաւոր բառգիրք ֆրանսերէնից հայերէն, իսկ Սրբեան, Էմինեան և այլն վիեննայի ու վիեննայի վարդապետների բառգիրքով ամենին մի բան չէ կարելի չինել: Վասնորոյրութիւնը վերջնապէս վրա է յայտնի, գրեթէ ակադէմիական կատարելութիւններ ունեցող ֆրանսական Նորայր Բիւզանդացու բառգիրքը, որը կարող է լինել իւրաքանչիւր հայ երկրաստորդի Այդանի գրքը: Արդէն մի անգամ տեսել էի թէ այդ բառարանին այս գլխից բաժանորդ գրվողներին մեծ զիջում կը լինի, այն է մօտ մի երրորդականը, այնպէս որ հիմայ, այսինքն, մինչև բառարանի տպագրութեան վերջնապէս, որ ընչ է մնացած, բաժանորդագրին է 20 բուրլ, որ պիտի ուղարկած յայտնի բանկիր Մոսլիմա-նին հետեւել Տասցեով: Constantinople, Galata, Mehmet-Ali pacha han № 4, իսկ տպագրու-

զանի տարեկան բաժանորդագրին է: Եթէ այսպիսի մի կարևոր դէպքում էլ մենք ցոյց տանք մեր մշտական յատկութիւնը հայոց ազգի վրա մարդավայել համարում ունեցող մի եւրօպական պ. պուրիցիստին, էլ վայ մեզ: այն ժամանակ վիեննա գնացող վաճառական թէ ուսանող հայ, փոխանակ մտնելու Journal d'Orient-ի խմբագրութիւն իր յարգանքը և մեծարանքը յայտնելու, պիտի երեսը ծածկէ ու հարկը վերստ հեռու փախչէ այդ յարգելի խմբագրութիւնից: միթէ այստեղ էլ կարող է հասնել գործը—Աստուած մի արասցէ, այն ժամանակը թող իւրաքանչիւր հայ հանգիտ խղճմտանքով թքէ իր հայ ծնած օրի վրա ու գնայ ինչ ուզում է լինի՝ Երբ, պարսիկ, հրէայ, գնչու, բայց ոչ հայ միթէ այսպէս չէ...

Գիտեմ, որ մի հանգամանք մեծ արգելք կարող է լինել կողմիսի հայերին Journal d'Orient-ին տարեկան 8 բուրլ վճարել բաժանորդ լինելու համար, այդ հանգամանքը շատերի ֆրանսերէն չիմանալն է: Ել թողնենք մի կողմ, որ առանց ֆրանսերէնի ետխան բռնելու, կարելի էր հէնց սօսել համար ստանալ վիեննայի լրագիրը, ինչպէս սեզանի զարդ և ֆրանսերէն իմացող հիւրերին զբաղելու մի վայելուչ բան: Թողնենք, ասում եմ, այդ մի կողմ, այլ գանք շուտփելի անձնական օգուտ ստանալուն յիշեալ լրագրի բաժանորդագրութիւնից: Յայտնի է նաև, որ կողմից սի գաւառական քաղաքներում վաղուց արդէն շատ տարածված է ծնողները մէջ սովորացնել իրանց որդիկերանց ֆրանսերէն, Մարտիլի կամ առ հոտարակ Նարոպա գնալու համար աւետարական նպատակով: յայտնի է ես, որ քիչ երկրաստորդներ չը կան այդ գաւառական քաղաքներում, որոնք որ և է կերպով բաւական աշխատել են և սովորել ֆրանսերէն, բայց կարգաւ և խօսելու վարժութիւն ու գործածութիւն չուներնալու պատճառով, կամ բոլորովին մոռացել են իրանց սովորածը կամ թէ մոռանալու վրա են: Ել ինչ ասել կուզէ, որ այդպիսիները նախ ժամանակ չունեն նստել իւրաքանչիւր օր մի ժամ ժամ ֆրանսերէն գրքեր կարգաւ երկրորդ հարկը թէ հարկերից մինը կարող է ձեռք բերել ուրիշ գրքը քան թէ Margot և Bobinson de douze ans,—իսկ մի և նոյն այդ չոր ու ցամաք գրքերը անգարար աչքով անցնելն էլ կարող է հասցնել մարդուն Գօգօլի Պետրուշայի օրին: Մինչևեռ յայտնի է միւս կողմից, որ լրագիրը կարգաւուց էլ հեշտ, բաղմակողմանի և հետաքրքիր ընթերցանելի բան չէ կարող լինել ոչ միայն լոկ պատճենական օգտի համար, այլ ես օտար լեզու, այն էլ ամենաքիչ քաղաքական լեզու սովորելու համար: Ով որ գուլերներներ և գուլերանաններն չէ ունեցել օտար լեզուներ սովորելու համար, կարող է վիսյի թէ որչափ ճիշդ է վերս ասածս: Ռուսին եթէ այս այսպէս է, միթէ իւրաքանչիւր հայը կը խնայէ տարեկան 8 բուրլ վիեննայի Journal d'Orient-ին, որը եթէ չէ կարող կարգաւ ինքը, կարող է կարգաւ իր փոքրիկ որդին և թարգմանել իր հօրը նրանք ուրախացնելու և իրան օգուտ բերելու համար: Կարծեմ որ գործին նախընտրելով ինչ հնչը չոր շահի ու նիւթականի կողմից, յիշեալ ֆրանսերէն լրագրի ստանալը քիչ չաճաւէտ չէ և այս կողմից էլ, որից դուրս հայը ըստ մեծի մասին չէ ուզում ուրիշ շարժախիթ ձանաչել...

Այս տեսակետից նայելով մեր նոր ֆրանսերէն օրգանին բաժանորդ գրվելու վրա, հարկաւոր եմ համարում յիշեցնել յայտնել ես այն, որ մենք մինչև հիմայ զեռ չուներք մի փոքր ի շատ օրինաւոր բառգիրք ֆրանսերէնից հայերէն, իսկ Սրբեան, Էմինեան և այլն վիեննայի ու վիեննայի վարդապետների բառգիրքով ամենին մի բան չէ կարելի չինել: Վասնորոյրութիւնը վերջնապէս վրա է յայտնի, գրեթէ ակադէմիական կատարելութիւններ ունեցող ֆրանսական Նորայր Բիւզանդացու բառգիրքը, որը կարող է լինել իւրաքանչիւր հայ երկրաստորդի Այդանի գրքը: Արդէն մի անգամ տեսել էի թէ այդ բառարանին այս գլխից բաժանորդ գրվողներին մեծ զիջում կը լինի, այն է մօտ մի երրորդականը, այնպէս որ հիմայ, այսինքն, մինչև բառարանի տպագրութեան վերջնապէս, որ ընչ է մնացած, բաժանորդագրին է 20 բուրլ, որ պիտի ուղարկած յայտնի բանկիր Մոսլիմա-նին հետեւել Տասցեով: Constantinople, Galata, Mehmet-Ali pacha han № 4, իսկ տպագրու-

զանի տարեկան բաժանորդագրին է: Եթէ այսպիսի մի կարևոր դէպքում էլ մենք ցոյց տանք մեր մշտական յատկութիւնը հայոց ազգի վրա մարդավայել համարում ունեցող մի եւրօպական պ. պուրիցիստին, էլ վայ մեզ: այն ժամանակ վիեննա գնացող վաճառական թէ ուսանող հայ, փոխանակ մտնելու Journal d'Orient-ի խմբագրութիւն իր յարգանքը և մեծարանքը յայտնելու, պիտի երեսը ծածկէ ու հարկը վերստ հեռու փախչէ այդ յարգելի խմբագրութիւնից: միթէ այստեղ էլ կարող է հասնել գործը—Աստուած մի արասցէ, այն ժամանակը թող իւրաքանչիւր հայ հանգիտ խղճմտանքով թքէ իր հայ ծնած օրի վրա ու գնայ ինչ ուզում է լինի՝ Երբ, պարսիկ, հրէայ, գնչու, բայց ոչ հայ միթէ այսպէս չէ...

թիւնը վերջնապէս յետ բառարանի գինը կը լինի մօտ 30—35 բուրլ, ուրեմն զանազանութիւնը խիստ զգալի է: Անցեալները, երբ այս մասին գրեցի «Մշակին», շատ շուտով կողմից անցնելու հիմայ ես շատ յաջողութեամբ շատ մեր յարգելի գիտնական պ. Նորայրը, խնդրել է իր շնորհակալութիւնը և յարգանքը յայտնել ձեզ: Եթէ մոռացայ կատարել այդ մինչև հիմայ, կը ներքէ: Ինչ այս մոռացութեան փոխարէն խնդրեմ այս անգամ ընդունէք և իմ շնորհակալութիւնը ձեր առաջնորդող յօդուածի համար «Մշակի» օգոստոսի 25, 136 թւի մէջ: Այդ յօդուածով դուք առաջարկում էք կողմիսի մեր ազգային ուսումնարանների մէջ ուսման հետ միասին մտցնել և սկզբնական արհեստ, այդ ուսումնարանները ժողովրդի համար գրաւել անհրաժեշտ համար, բարդաւոր և օրհնեալ միտք...

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Այժմ յայտնվեցաւ որ օգոստոսի 3-ին Մարտիլի տեղի ունեցած գոմէշների արշաւանքի ժամանակ տախտակամանի փուլ զաւուց սպանվեցան ոչ թէ 15, այլ 20 հոգի հանդիսականներէից և վերաւորվեցան ոչ թէ 150, այլ 1,000 հոգի:

—Բերլինի «National Zeitg.» լրագիրը համարում է Գամբետտայի Բէլլիւլում արտասանած ձառը մի սպանալիք եւրօպական խաղաղութեան դէմ:

—Վիեննայից հեռագրում են որ վերջին լուրերին նայելով անգլիական առաջին միլիտար Գլազտօն դիտաւորութիւն ունի հրաժարական ստը իր պաշտօնից:

—Վիեննայի հրէանկեր ընկերակցութիւնը վճարեց նշանակել 5 միլիոն դոլարի (11 միլիոն բուրլ) գումարը Ռուսաստանից Ամերիկա գաղթող հրէաներին օժանդակելու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի: «ПРАВИТ. ВѢСТН.» լրագրի մէջ այսօր տպված է Բարձրագոյն Հրաման օգոստոսի 12-ից մայրաքաղաքի կառավարութիւնը օքրեպօլից-մէյստերին յանձնելու և Ս. Պետերբուրգի քաղաքապետութեան պաշտօնը ոչնչացնելու մասին, քաղաքապետի կանցլարիան համապատասխան կերպով փոփոխելով և յանձնելով նրա մասը նահանգապետի կանցլարիային, որին յանձնված է նախագահութիւն քաղաքային գործերի մասին պրիստատպիայի մէջ և հսկողութիւնը հասարակական վարչութեան կանոնաւորութեան վրա: Վիեննայի կողմից նշանակված է Օրերպօլիցմէյստեր: Մօսկվայի օքրեպօլից-մէյստեր նշանակված է զենկալ Եանկօվսկի:

Ա.ԹԵՆԳ, 14 օգոստոսի: Թիւրքաց գործերը, գատարկելով Յունաստանին զիջած երկրի երրորդ մասը, այրեցին Կայսցա զեւըն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 բ. 25 1/2 կ., երկրորդ 94 բ. 25 1/2 կ., երրորդ 94 բ. 75 1/2 կ., չորրորդ 94 բ. 12 1/2 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 բ. 55 կ., երկրորդ 226 բ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 բ. 25 կ., երկրորդ 91 բ. 12 1/2 կ., երրորդ 91 բ. 37 կ., ոսկի 7 բ. 70 կ.: Ռուսաց 1 բուրլ Լճուղունց վրա արժէ 25,75 պէս, Ռուսաց 100 բ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ: Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 25 ամս: Բօրսայի տրամագրութիւնը թոյլ է:

Իմրագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

Բոլոր բանաստեղծութիւնները ժողովածուն, ապա Մասկովյում ամենաընտիր թրդ-թի վերայ, հեղինակի փոխարէն պատկերով, զինքը 50 կ. վաճառվում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կրուզո՝ Արանեան " 60 կ.
- 2) Ահմէդի տոպրակը՝ Լալայեան " 10 "
- 3) Մաղկաքար արձ. և չափ. բանից՝ Կոստանեան " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան " 40 "

Վերջին երկու գրքերը բոլոր գրողները գնողները նշանակող գիշումն են ստանում:

144 Արժուէնու գալերիա 144
ամենաէական պահեստ
մերկի և հայելիների:

ՄՈՏԱԿՆԵՐ կտորիւն փոշի:
Ծախվում է **ՇԱՏՈՒՐՈՎԻ** լամպի մագաղիւնում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՍՅ
գրասարքերը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական զրափաճառանոցներում:

Գինն է 40 կօպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կօպէկով ձեռք բերել, զինքը **ԿԱՆԻՅԻՎ** վճարելով և ճանապարհ ճանապարհ իր վրա առնելով:

Թող զիմէ մեզ հետեւալ հասցեով:
Վե Թիֆլիս. — Նա ԱվաբարՖ. Ի-
վանու Պետրովիչու Նազարյանց.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ԳԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆիտներ, **ԿԱԿԱՕ.** բրինձ, ՍՄԱՆԵՂԵՆ, բոլորեղ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (սյճա), մատուցարաններ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գալաններ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈՂՎԵՐՆԵՐ, աբուներ, ՄԱՀԱՍԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիւս, պարուսին, թաշկիւտներ, երեսպրիչներ, կրօնկա, գուրաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏՎԵՑ, խերես, կօնակ և այլն: Թէ՛ս մեծ քանակութեամբ վաճառուսներին համար ՊՈՒՎԵՂ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գանել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մազնիկա, խմոր ՇԱՐԱԻԻ գէժ, ԽԻՆԱՅԻ գինի ջրովի գէժ, կարբոնեան ֆՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկրողների համար, պարսկական փոշի:

51—100

Հրատարակութեամբ Ներսիսի Ամէսոնեանց լոյս տեսաւ զերմանացի բժիշկ Երէրերի «Տնային բժշկական մարմնամարզութեան» զբոյժի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց դործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կօպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան զրափաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանանցի մօտ.» Тройцкій пер. типография Вартаганца, въ Тифлисе.

Ա Ր Գ Է Ն Ծ ա խ վ ու մ է
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ»
Անունով մեր **ՉՈՐՐՈՐԴ** տարուայ զրասարքերը Կենտրոնական և Կովկասեան զրափաճառանոցներում:

Գինն է 60 կօպէկ:

Գուճարով անողներին զիջումն կը լինի: Իսկ ով ցանկանում է հատը 55 կօպէկով ձեռք բերել, զինքը **ԿԱՆԻՅԻՎ** վճարելով թող զիմէ մեզ հետեւալ հասցեով. Վե Թիֆլիս. — Նա ԱվաբարՖ. Ի-
վանու Պետրովիչու Նազարյանց.

Յ. Նազարեանց
3—25

Въ Редакции газеты
«МШАКЪ»
Продается
**«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»**
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գ ա ն ո վ ս կ ա յ ա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՅԻՑԻ փողոցը № 11. փ օ ս տ ա տ ա ն կառուի քուչան: Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամեն նամատելի զննելով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՆԵՐԻ ՓՈՐՈՒՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

«Խ Ե Ն Թ Ը»
ԱՐԿԱՄՆԵՐ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ ԲԱՑՑԻԻ
Տպագծ մաքուր թղթի վրա, զիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական զրափաճառանոցում» պ. Ջաբարիա Գրիգորյանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բոզար-Չեանցի, Հովուեանցի ծխախոտի մագաղիւններում:

Գինն է 1 րուբլ 20 կօպ.:

Վ Ա Ր Շ Ա Վ Ա: Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

Գ Ա Լ Մ Ա Ն Ի Ն

անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների գեղասերի և զրոգիստների մօտ: Գլխաւոր գէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԵՆՍԿՈՒ** զեղատան մէջն է գտնվում: Վարչապետ. Էլեիտարալի փողոց № 35. Գալանտի մեծ արկղիկը արժէ վարչապետ 50 կօպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խարդախութեանը և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեկնութիւնը և ծարիրի աշխարհահայրէսի մեզայները. **Վ. ԿԱՐՊԵՆՍԿԻ** 17—20 (1)

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերագործող: Գինը 2 ր. շէշը, **ՓՈՍՏԱՅՈՂ** ուղարկված 2 ր. 49 կօպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԿՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը փրձին զլխապաւի գէժ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՕՆ** և հոտուէտ ջրեր և այլն: 15—100



Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ն Պ Ա Ր Տ Է Չ

Տ Ա Ր Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

Ընդունելութիւնները սխալում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից: «Մանկական պարտէզի» մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ «Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:

Իշխան Ն. Ամատուեու տուն, Վելիամիրովսկի փողոցի վերայ:

Բ. Միրիանեանց

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի **Ս. Մանդրինեանի հետեւալ աշխատութիւնը. «ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ»** ծխական դպրոցների 4-րդ տարվայ դասընթացը, և միանգամայն 1-ն, 2-րդ և 3 տարիների համար հրահանգ:

Վ Ի Է Ն Ա Յ Ի Մ Ե Բ Է Լ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատուրիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են զիմել այս հասցեով. Թիֆլիս, Միխայլու Մ. Երթ-Նիկոցօսու.

57—150

ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ
Переѣхалъ на Сололакъскую улицу, въ домѣ К. Меликова.

ՄԻ ՊԱՏՈՒԱԻՈՐ ԸՆՏԱՆԻՔ
ցանկանում է ընդունել իր մօտ օտարաքաղաքացի և թիֆլիսեցի **ԵՐԵՒԱՆԵՐԻՆ**, որոնք սովորում են ուսումնարանների մէջ: Կարելի է **ԳԱՍԵՐԸ** կրթել սալ և առանց կրկնութեան: **ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ** շատ չափաւոր է: Հասցեն: Էնֆիաջեանցի զրափաճառանոցի մէջ:
3—3 (4)

ԵՐԿՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻԶ ՉԵՄԵՍՈՎ տեղափոխեց իր բնակարանը Արսենալայա փողոց «Կրուժոփի» շինութեան կառուի, Գարբուճովի տանը: 4—5 (1)

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէ՛յ լու տեսակի ֆուտար 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեան առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՑԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէ՛յի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական խանութը կը ստանէ **ՄԱՔՈՒՐ ԹԷ՛յ** առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**: 36—100

ՎԵՐԱԲՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծալող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՏ-ԱՓՈՒ 4 ր., ԲԱԶԱՍՓՈՒ-ՄԱՀԱՍԱԼ 10 րուբլ և աւելի, թէ՛յի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեղա ծխողների համար 60 կ. ֆուտար, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ**: 10,000 զոյգ գուլթաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱՍԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բոսաղէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ըէֆօլիեր 4 ր.—35 ր., 700 աբուճ ԿԻՍՏԱՆՈՎ, 10,000 ֆուտար թէ՛յ թէ՛սՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ:
33—100